



ԳՐԻԳՈՐ Ռ. ՌՔԵՊԻՍԿՈՎՈՍ ՅՈՎ. ԲԵԱՆՑՑ վահանայր Երնջակու Ա. Կարապետի վահաց անցեալ Յունիս ամսոյ 15 առաւօտեան ժամը 9 ին հանգեալի Տէր 63 տարեկան հասակում:

Հանգուցեալը 1851 Թուին մտնելով Մայր Աթոռոյս հոգեւոր դպրոցը յաշակերտութիւն՝ 1859 Թուին սատցել է չորրորդ աստիճան դպրութեան, 1842 Թուին ծեռնադրուել է Ապրեկաւագ եւ 1849 Թուին՝ Արեղայ:

Ըստ կարդաղրութեան Սինօդի 1849 Թուի Ահապտեմբերի 25 ից — 1852 Թիւը Մայր Աթոռոյս հոգեւոր դպրոցում վարել է ուսուցչի պաշտօն՝ 1852 Թուին նշանակուել է քննիչ Երեւանու Թեմի հոգեւոր զործերի, եւ նոյն Թուին սատցել է ծայրագոյն աստիճան Վարդապյետութեան: Ըստ առաջարկութեան Հանգուցեալի Տէր Ներսէս Ե. Կաթուղիկոսի ամենայն Հայոց 1857 Թուի Յունուարի 12 ին Յարմրագոյնս հաւստատուել է անզամ Սինօդի եւ նոյն Թուի Ապրելի 15 ին Սինօդի օրադրութեամբ նշանակուել է տեսուչ Մայր Աթոռոյս Տպարանի: 1858 Թուի Հոկտեմբերի 15 ից Սինօդի օրադրութեամբ նշանակուած լինելով տեսուչ Մայր Աթոռոյս դպրանոցի, նոյն պաշտօնը վարել է մինչեւ 1860 Թուի Յունիսի 4 ը: Տպարանի եւ դպրանոցի տեսչութեանց պաշտօնը չերմեռանդութեամբ վարելու համար վարձատրուել է վարդ առետական խանջական ականակուու խաչով եւ կերպասեայ ծաղկեայ փիլոնվ. 1859 Թուին հանգուցեալի Տէր Մատթէոս Կաթուղիկոսից ծեռնադրուել է Եպիսկոպոս եւ ստացել է Եպիսկոպոսական պնտղէ: 1860 Թուի 0 դոսսոսի 4 ից մինչեւ 1864 Թուի Մարտի 4 ը վարել է Երեւանայ Թեմական փոխանորդի պաշտօնը եւ ստացել է Արքեպիսկոպոսութեան կոչումն: Ըստ կօնդակի հանգուցեալի Տէր Մատթէոս Կաթուղիկոսի 1861 Թուի Նոյեմբերի 50 ից մինչեւ 1862 Թուի Ահապտեմբերի 15 ը վարել է Մայր Աթոռոյս դպրանոցի տեսչութեան պաշտօնը: 1868 Մարտ 7 կօնդակաւ ի Տէր հանգուցեալ Գէորգ Գ. Կաթուղիկոսի նշանակուել է առաջնորդ Գավրիժու. 1874 Մայիս 23 արձակուելով նոյն պաշտօնից նշանակուել է յաջորդ հին Կաթուղիչիանու եւ 1873 ին արձակուելով նոյն պաշտօնից նշանակուել է վանտահայր Երնջակու Ս. Կարապետի վանուց, ուր եւ կնքեց իւր մահկանացուն: Օրմներով յիշատակը հանգուցելոյն աղօթենք առ Աստուած դասել նորսն ընդ սուրբու եւ ընդ սիրելիս յարբայութեան իւրում. ամէն: